**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3**
**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱԾՁԲ-10/7» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան — 22.05.2019թ.
ժամը 11⁰⁰

Մասնակցում էին՝
**Գնահատող հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝**
ՀՀ ՊՆ ԿԾ և ՁԲ վարչության պետի տեղակալ Ա. Մուրադյանը,
**գնահատողներ՝**
ՀՀ ՊՆ ԿԾ և ՁԲՎ ՁԲՖԿ ծառայության պետ Ա. Պապյանը,
ՀՀ ՊՆ ԿԾ և ՁԲՎ ՁԲՖ ԾԲ առաջատար մասնագետ Ա. Սաֆարյանը,
**Գնումները համակարգող՝**
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետի պաշտոնակատար Ա. Սահակյանը:

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱԾՁԲ-10/7» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

(Ա. Սահակյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակցի մասին.
2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱԾՁԲ-10/7» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի էլեկտրոնային հայտը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.
3. Մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱԾՁԲ-10/7» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի 1-ին տեղն զբաղեցրած մասնակցի որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակցի մասին.**

(Ա. Սահակյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար **արտաքին ջրագծերի և կոյուղագծերի նորոգման աշխատանքների** ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱԾՁԲ-10/7» ծածկագրով մրցույթին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

| Հ/հ | Մասնակցի անվանումը |
|---|---|
| 1 | «Արակ» ՍՊԸ |

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**2. « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱԾՁԲ-10/7» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի էլեկտրոնային հայտը կազմելու և ներկայացնելու՝ մրցույթի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.**

(Ա. Սահակյան)

2.1 Մասնակցի էլեկտրոնային հայտը www.armeps.am կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի:
2.2 Մասնակցի էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող (նախատեսված) փաստաթղթերն առկա են:
2.3 Մասնակցի էլեկտրոնային հայտը համապատասխանում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱԾՁԲ-10/7» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին):

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**3. Մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.**

(Ա. Սահակյան)

3.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱԾՁԲ-10/7» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում գնային առաջարկ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

ՀՀ դրամ

| Չ/հ | Աշխատանքի անվանումը | Նախահաշվային գինը (միավորի գների հանրագումարը) | Մասնակցի անվանումը | Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ (արտաքին ջրագծերի և կոյուղագծերի նորոգման աշխատանքներ) | 16,208,088 | «Արակ» ՍՊԸ | 10,750,000 | 2,150,000 | 12,900,000 |

Ներկայացված են սույն ընթացակարգի հրավերով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված աշխատանքների (առանձին տողերի) համար մասնակցի կողմից առաջարկվող միավորի գների հանրագումարի արդյունքում ստացվող թվերը:

3.2 Մասնակցի գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը (հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը), ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են (ճիշտ են):

3.3 30.05.2019թ.-ին, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, սույն ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.6 կետի պահանջները և քանի որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/7» ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար հայտ էր ներկայացրել միայն մեկ մասնակից՝ «Արակ» ՍՊԸ-ն, գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը և 04.06.2019թ. ժամը 11:30-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓԶ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) գների նվազեցման նպատակով կազմակերպել միաժամանակյա բանակցություններ, իսկ գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն օրը էլեկտրոնային ձևով ծանուցեց վերոնշյալ մասնակցին միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին: Նշված օրը և ժամին նախատեսված բանակցություններին ներկայացավ «Արակ» ՍՊԸ-ի տնօրենի լիազորված անձ Աշոտ Ղազարյանը, սակայն բանակցությունների ընթացքում հրաժարվեց նվազեցնել առաջարկված գնային առաջարկը և արդյունքում նրա ներկայացրած գնային առաջարկը մնաց անփոփոխ:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**4. Ներկայացված գնային առաջարկի հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/7» ծածկագրով բաց մրցույթի 1-ին տեղն զբաղեցրած մասնակցի որոշման մասին.**

(Ա. Սահակյան)

4.1 Հայտերի բացման նիստի ավարտի օրը՝ 04.06.2019թ.-ին էլեկտրոնային գնահատման արդյունքում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/7» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկի հիման վրա 1-ին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվեց «Արակ» ՍՊԸ-ն:

4.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց հրապարակել հայտերի բացման նիստի արդյունքները և առաջին տեղն զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/7» ծածկագրով բաց մրցույթի հրավերի 2-րդ մասի (բաց մրցույթի հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

4.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց էլեկտրոնային փոստի միջոցով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև սույն ընթացակարգի հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.**

(Ա. Սահակյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**6. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

(Ա. Սահակյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/7» ծածկագրով բաց մրցույթի հաջորդ նիստն անցկացնել ոչ ուշ, քան 1-ին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացվելիք՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը, ժամը 11:00-ն, ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում՝ ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓԶ վարչության նիստերի դահլիճում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

| | |
|---|---|
| Գնահատող (ԳԱՊ) | Ա. Մուրադյան |
| Գնահատող | Ա. Պապյան |
| Գնահատող | Ա. Սաֆարյան |
| Գնումները համակարգող | Ա. Սահակյան |